

«Վավերացնում են»

Հայաստանի Հանրապետության

Նախագահ Ռ. Քոչարյան

9 հուլիսի 2005 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Մ Ա Ն

16 հունիսի 2005 թվականի N 894-Ն

888 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2004 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅՄԵՐԻ 11-Ի N 1592-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի նոյեմբերի 11-ի «Ներքին այրման շարժիչային վառելիքների տեխնիկական կանոնակարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի դեկտեմբերի 31-ի N 799 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1592-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

ա) որոշման 3-րդ կետում «6 ամիս» բառերը փոխարինել «8 ամիս» բառերով.

բ) որոշմամբ հաստատված տեխնիկական կանոնակարգում՝

1-ին աղյուսակը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

Աղյուսակ 1

« Ցուցանիշի անվանումը	Նորմը՝ ըստ բենզինի մակնիշի			
	նորմալ	ռեզու-լյար	պրեմիում	սուպեր
1	2	3	4	5
1. ճայթյունակայունությունը, օկտանային թիվը որոշված հետազոտական մեթոդով, ոչ պակաս	80	91	95	98
օկտանային թիվը որոշված շարժիչային մեթոդով, ոչ պակաս	76	81	85	88
2. Կապարի պարունակությունը, մգ/դմ ³ , ոչ ավելի. մինչև 2006 թվականի նոյեմբերի 1-ը	10	5		
2006 թվականի նոյեմբերի 1-ից	5	5		
3. հստությունը 15 °C ջերմաստիճանում, կգ/մ ³	700-750	720-775		
4. Ծծմբի պարունակությունը, մգ/կգ, ոչ ավելի. մինչև 2006 թվականի նոյեմբերի 1-ը	500	150		
2006 թվականի նոյեմբերի 1-ից մինչև 2010 թվականի հունվարի 1-ը	500	50		
2010 թվականի հունվարի 1-ից	500	10		
5. Ածխաջրածինների ծավալային մասը, %, ոչ ավելի արոմատիկ օլեֆիններ	-	35,0		
	-	21,0	18,0	18,0
6. Բենզոլի ծավալային մասը, %, ոչ ավելի	5,0	1,0		

1	2	3	4	5
7. Թթվածնի զանգվածային մասը, %, ոչ ավելի	-	2,7		
8. Օքսիդիչների ծավալային մասը, %, ոչ ավելի				
մեթանոլ	-	3,0		
էթանոլ	-	5,0		
իզոպրոպիլ սպիրտ	-	10,0		
իզոբութիլ սպիրտ	-	10,0		
եռաբութիլ սպիրտ	-	7,0		
եթերներ (C5 և ավելի)	-	15,0		
այլ օքսիդիչներ	-	10,0		

2-րդ աղյուսակում՝

«Նորմը՝ ըստ դասերի» սյունակում «B» տառը փոխարինել «A» տառով, նույն սյունակի 1-ին կետի «ոչ ավելի» տողում «70,0» քիվը փոխարինել «60,0» քվով,

«Ցուցանիշի անվանումը» սյունակը «150°C (E 150)» քվերից հետո լրացնել «ոչ պակաս» բառերով,

9-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9. 2-րդ աղյուսակում ներկայացված տառային նշագրերով ավտոմոբիլային բենզինի գոլորշիացման դասերը բաժանվում են ըստ սեզոնների՝

A՝ ամառային դաս (տաք ժամանակահատված)՝ մայիսի 1-ից մինչև հոկտեմբերի 1-ը,

C₁՝ անցումային դաս՝ մարտի 1-ից մինչև մայիսի 1-ը և հոկտեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի 1-ը,

F՝ ձմեռային դաս՝ դեկտեմբերի 1-ից մինչև մարտի 1-ը»,

10-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«10. Դիզելային վառելիքները բաժանվում են 2 տեսակի՝

ավտոմոբիլային դիզելային վառելիքներ,

այլ տեխնիկայի արագընթաց դիզելային և գազատուրբինային շարժիչային վառելիքներ (այսուհետ՝ դիզելագազատուրբինային վառելիքներ):

Ավտոմոբիլային դիզելային վառելիքների անվտանգությունը բնութագրող ցուցանիշները՝ ըստ սեզոնի դասերի, ներկայացված են 3-րդ աղյուսակում, դիզելագազատուրբինային վառելիքներինը՝ 3 ա աղյուսակում:

Աղյուսակ 3. Ավտոմոբիլային դիզելային վառելիքների ցուցանիշները և նորմերը

Ցուցանիշի անվանումը	Նորմը՝ ըստ	
	A դասի	4-րդ դասի
1. Ցետանային քիվը, ոչ պակաս կամ ցետանային ցուցիչը, ոչ պակաս	51,0 46,0	47,0 43,0
2. Խտությունը 15° C ջերմաստիճանում, կգ/մ ³	820-845 800-840	
3. Պոլիցիկլիկ արոմատիկ ածխաջրածինների զանգվածային մասը, %, ոչ ավելի	11	
4. Ծծմբի պարունակությունը, մգ/կգ, ոչ ավելի. մինչև 2006 թվականի նոյեմբերի 1-ը 2006 թվականի նոյեմբերի 1-ից մինչև 2010 թվականի հունվարի 1-ը 2010 թվականի հունվարի 1-ից	350 50 10	
5. Բռնկման ջերմաստիճանը, °C, ոչ ցածր	55	
6. Ածխածնի մնացորդը (կոքսելիությունը) 10 % նստվածքում, %, ոչ ավելի	0,30	

7. Մածուցիկությունը 40°C ջերմաստիճանում, մմ ² /վ	2,0-4,5	1,2-4,00
8. Պղտորման ջերմաստիճանը, °C, ոչ բարձր	0	մինուս 34
9. Ֆրակցիոն կազմը.		
95 % թորման ջերմաստիճանը (թորման վերջը), °C, ոչ բարձր	360	
180°C ջերմաստիճանում, %, ծավալային մասը, ոչ բարձր	-	10
250°C ջերմաստիճանում, %, ծավալային մասը, ոչ բարձր	65	-
340°C ջերմաստիճանում, %, ծավալային մասը, ոչ ցածր	-	95
350°C ջերմաստիճանում, %, ծավալային մասը, ոչ ցածր	85	-

Աղյուսակ 3ա. Դիզելազագատորբինային վառելիքների ցուցանիշները և նորմերը

Ցուցանիշի անվանումը	Նորմը՝ ըստ	
	A դասի	4-րդ դասի
1. Ցետանային թիվը, ոչ պակաս	45	
2. Խտությունը 20°C ջերմաստիճանում, կգ/մ ³ , ոչ բարձր	860	840
3. Ծծմբաջրածնի պարունակությունը	Բացակայում է	
4. Ծծմբի զանգվածային մասը, մգ/կգ, ոչ ավելի	500	
5. Բռնկման ջերմաստիճանը որոշված փակ հալքանոթում, °C, ոչ ցածր ընդհանուր մշանակության դիզելների համար,	40	35
ջերմաքարչ և նավային դիզելների ու զազատորբինների համար	61	40
6. Ածխածնի մնացորդը (կոքսելիությունը) 10 % նստվածքի, %, ոչ ավելի	0,20	0,30
7. Կինեմատիկական մածուցիկությունը 20 °C դեպքում, մմ ² /վ	3,0-6,0	1,8-5,0
8. Պղտորման ջերմաստիճանը, °C, ոչ բարձր	մինուս 5	մինուս 25
9. Ֆրակցիոն կազմը՝		
50 % թորման ջերմաստիճանը, °C, ոչ բարձր	285	280
95 % թորման ջերմաստիճանը (թորման վերջը), °C, ոչ բարձր	370	340

11-րդ կետում «1, 2 և 3-րդ» թվերը փոխարինել «1, 2, 3 և 3ա» թվերով,

12-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«12. Դիզելային վառելիքի սեզոնային դասերը՝ 3-րդ և 3ա աղյուսակներում ներկայացված նշագրերով, բաժանվում են հետևյալ դասերի՝

A՝ ամառային դաս՝ ապրիլի 1-ից մինչև նոյեմբերի 1-ը,

4-րդ դաս՝ նոյեմբերի 1-ից մինչև ապրիլի 1-ը»,

16-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«16. Ավտոմոբիլային բենզինի իրացման կետերի բաշխիչ պոմպայուների վրա պետք է մակնշված լինեն բենզինի մակնիշը, օկտանային թիվը՝ որոշված հետազոտական մեթոդով:

Դիզելային վառելիքների բաշխիչ պոմպայուների վրա պետք է լինեն մակնշված դիզելային վառելիքի տեսակը (ավտոմոբիլային դիզելային վառելիք կամ դիզելազագատորբինային վառելիք) և ցետանային թիվը, «ԱՍԱՌԱՅԻՆ» (A ամառային սեզոնի համար) կամ «ՁՄԵՌԱՅԻՆ» (4-րդ դասի ձմեռային սեզոնի համար) մակնշվածքը:

Եթե ավտոմոբիլային բենզինում (1-ին աղյուսակի 4-րդ կետ) և ավտոմոբիլային դիզելային վառելիքում (3-րդ աղյուսակի 4-րդ կետ) ծծմբի պարունակությունը չի գերազանցում 10 մգ/կգ-ից, ապա ավտոմոբիլային բենզինի և ավտոմոբիլային դիզելային վառելիքի պոմպայուների վրա կարող են լրացուցիչ նշվել «Ծծումբ չի պարունակում» մակնշվածքը».

32-րդ կետի երկրորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Արտադրողը, մատակարարը կամ նրա լիազոր ներկայացուցիչը վառելիքների համապատասխան փոխադրական տարաների վրա և ապրանքաուղեկից փաստաթղթերում կարող է նշել Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի

սեպտեմբերի 9-ի «Համապատասխանության նշանի պատկերը, դրան ներկայացվող տեխնիկական պահանջները և կիրառման կարգը հաստատելու մասին» N 1281-Ն որոշմամբ հաստատված ձևի համապատասխանության նշան՝ կիրառելով համապատասխանությունը հավաստող սերտիֆիկացման մարմնի նույնականացման նշագիրը».

36-րդ կետում «5ս սխեմայի դեպքում» բառերը փոխարինել «5ս սխեմայի դեպքում՝ 36 ամիս, 6ս սխեմայի դեպքում» բառերով,

VIII բաժնի՝

5-րդ աղյուսակից հանել «ԳՕՍՏ 1461» և «ԳՕՍՏ 6321 (ԻՍՕ 2160)» ստանդարտների նշագրերով տողերն ամբողջությամբ, «ԻՍՕ 4264» և «ԵՆ 12916» ստանդարտի նշագրերը համապատասխանաբար փոխարինել «ՀՍՏ ԻՍՕ 4264» և «ՀՍՏ ԵՆ 12916» ստանդարտների նշագրերով,

5-րդ աղյուսակը լրացնել հետևյալ տողերով.

« ԳՕՍՏ 17323	Վառելիքներ շարժիչների համար. Մերկապտանային և ծծմբաջրածնային ծծմբի որոշման պոտենցոմետրիկ տիտրման մեթոդ
ԳՕՍՏ 29040	Բենզիններ. Բենզոլի և արոմատիկ ածխաջրածինների գումարային պարունակության որոշման մեթոդ
ԵՆ 1601	Նավթամթերք հեղուկ. Բենզին ոչ էթիլացված. Թթվածին պարունակող օրգանական միացությունների և թթվածնի ընդհանուր պարունակության որոշման գազաքրոմատագրաֆիկական (Օ-FID) մեթոդ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2005 թվականի օգոստոսի 8-ից:

**Հայաստանի Հանրապետության
վարչապետ**

Ա. Մարգարյան

2005 թ. հուլիսի 2
Երևան